ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Գ Լ Խ Ա Վ Ո Ր Ք Ա Ր Տ Ո Ւ Ղ Ա Ր

Հայաստանի Հանրապետություն, 0010, ք. Երևան, Տիգրան Մեծ 4, հեռ.՝ (+374 60) 830 840, (+374 60) 830 850
Էլ-փոստ՝ info@competition.am, վեբ կայք՝ //www.competition.am

«22» 09 2022 թ.
No ՄՊՀ-3604

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ
ԱՂԱՍԻ ԳԱԳԻԿԻ ԴԱՐԲԻՆՅԱՆԻՆ
(հասցե՝ ք.Երևան, Շիրակի օբ, շ. 1, բն. 18)

Հարգելի՛ պարոն Դարբինյան,

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը (այսուհետ նաև՝ **Հանձնաժողով**) 2022 թվականի սեպտեմբերի 20-ին ընդունել է ««Ֆիզիկական անձ Լարիսա Լյովայի Խալաթյան և անհատ ձեռնարկատեր Աղասի Գագիկի Դարբինյան» անձանց խմբի նկատմամբ պատասխանատվության միջոց կիրառելու մասին» թիվ 339-Ա որոշումը (այսուհետ նաև՝ **թիվ 339-Ա որոշում**):

«Ֆիզիկական անձ Լարիսա Լյովայի Խալաթյան և անհատ ձեռնարկատեր Աղասի Գագիկի Դարբինյան» անձանց խմբի նկատմամբ թիվ 339-Ա որոշման 2-րդ կետով նշանակվել է 630 338 (վեց հարյուր երեսուն հազար երեք հարյուր երեսունութ) ՀՀ դրամի չափով տուգանք:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ.

1. թիվ 339-Ա որոշման 2-րդ կետը դրանով նշանակված տուգանքը մինչև թիվ 339-Ա որոշման անբողոքարկելի դառնալը չվճարելու դեպքում ենթակա է հարկադիր կատարման՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով սահմանված կարգով.

2. թիվ 339-Ա որոշմամբ նշանակված տուգանքն ենթակա է վճարման Հանձնաժողովի 900005024147 հաշվեհամարին.

3. Հանձնաժողովի որոշմամբ նշանակված տուգանքի 75 տոկոսը որոշման ուժի մեջ մտնելուց հետո՝ երկամսյա ժամկետում, վճարելու դեպքում տուգանքի վճարման պարտականությունը համարվում է պատշաճ կատարված.

4. Հանձնաժողով փաստաթղթեր ներկայացնել և ստանալ, ինչպես նաև Հանձնաժողովի հետ հետագա ողջ հաղորդակցությունը կարող եք իրականացնել նաև առցանց՝ Հանձնաժողովի e-Compete էլեկտրոնային համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով, որի համար անհրաժեշտ է գրանցվել Համակարգում՝ մուտք գործելով Հանձնաժողովի պաշտոնական կայքի (www.competition.am) «Իմ էջը» բաժին, ընտրելով «Գրանցվել» հրամանը և լրացնելով անձի նույնականացման համար պահանջվող տվյալները:

Կից ներկայացվում է թիվ 339-Ա որոշման պատճենը:

Առդիր՝ «15» թերթ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ **ԱՇՈՏ ՎԱՀԱՆՅԱՆ**

Կատարող՝ Մերի Բաղդասարյան
Անբարեխիղճ մրցակցության վերահսկողության վարչություն
Հեռ. (+374 60) 830-840 (244)

competition.am կայքում հրապարակման օրը՝ 1 դեկտեմբերի 2022 թվական:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 սեպտեմբերի 2022 թվականի թիվ 339-Ա

«ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁ ԼԱՐԻՍԱ ԼՅՈՎԱՅԻ ԽԱԼԱԹՅԱՆ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԱՂԱՍԻ ԳԱԳԻԿԻ ԴԱՐԲԻՆՅԱՆ» ԱՆՁԱՆՑ ԽՄԲԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը (այսուհետ նաև՝ **Հանձնաժողով**) 2022 թվականի սեպտեմբերի 20-ի նիստում, քննարկելով «Ֆիզիկական անձ Լարիսա Լյովայի Խալաթյան և անհատ ձեռնարկատեր Աղասի Գագիկի Դարբինյան» անձանց խմբի նկատմամբ պատասխանատվության միջոց կիրառելու մասին հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Վարույթի ընթացքի հակիրճ նկարագրությունը.

Հանձնաժողովը 2022 թվականի հունիսի 28-ին «Լարիսա Լյովայի Խալաթյանի կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին» թիվ 233-Ա որոշմամբ (այսուհետ նաև՝ **թիվ 233-Ա որոշում**) հարուցել է թիվ ՀԳ-01332/22 վարույթը (այսուհետ նաև՝ **Վարույթ**):

Թիվ 233-Ա որոշումը՝ Հանձնաժողովի նախագահի պաշտոնակատարի 2022 թվականի հունիսի 29-ի թիվ 003075 կից գրությամբ (այսուհետ նաև՝ **թիվ 003075 գրություն**), ուղարկվել է ֆիզիկական անձ Լարիսա Լյովայի Խալաթյանին (այսուհետ նաև՝ **Լ. Խալաթյան**) վերջինիս հաշվառման հասցեով, սակայն համաձայն «Հայփոստ» փակ բաժնետիրական ընկերության ծանուցագրի՝ այն Լ. Խալաթյանին չի հանձնվել և վերադարձվել է «Չպահանջված» հիմքով:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի (այսուհետ նաև՝ **Օրենք**) 45-րդ հոդվածի 11-րդ մասով՝ թիվ 233-Ա որոշումը և թիվ 003075 գրությունը 2022 թվականի հուլիսի 15-ին հրապարակվել են «www.azdarar.am» կայքում և Հանձնաժողովի պաշտոնական կայքում (competition.am): Հետևաբար, 2022 թվականի հուլիսի 20-ին թիվ 233-Ա որոշումը՝ թիվ 003075 գրությամբ, համարվել է Լ. Խալաթյանին պատշաճ հանձնված:

Հանձնաժողովը 2022 թվականի օգոստոսի 16-ին «Անհատ ձեռնարկատեր Աղասի Գագիկի Դարբինյանին թիվ ՀԳ-01332/22 վարույթով նոր պատասխանող ներգրավելու մասին» թիվ 299-Ա որոշմամբ (այսուհետ նաև՝ **թիվ 299-Ա որոշում**) անհատ ձեռնարկատեր Աղասի Գագիկի Դարբինյանին (այսուհետ նաև՝ **ԱՁ Ա. Դարբինյան**) ներգրավել է վարույթով որպես նոր պատասխանող:

Թիվ 299-Ա որոշումը՝ Հանձնաժողովի գլխավոր քարտուղարի 2022 թվականի օգոստոսի 17-ի թիվ 4577 գրությամբ (այսուհետ նաև՝ **թիվ 4577 գրություն**), ուղարկվել է ԱՁ Ա. Դարբինյանին վերջինիս իրավաբանական հասցեով, սակայն համաձայն «Հայփոստ» փակ բաժնետիրական ընկերության ծանուցագրի՝ այն ԱՁ Ա. Դարբինյանին չի հանձնվել և վերադարձվել է «Չպահանջված» հիմքով:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենքի 45-րդ հոդվածի 11-րդ մասով՝ թիվ 299-Ա որոշումը և թիվ 4577 գրությունը 2022 թվականի օգոստոսի 24-ին հրապարակվել են «www.azdarar.am» կայքում և Հանձնաժողովի պաշտոնական կայքում (competition.am): Հետևաբար, 2022 թվականի օգոստոսի 29-ից թիվ 299-Ա որոշումը՝ թիվ 4577 գրությամբ, համարվել է ԱՁ Ա. Դարբինյանին պատշաճ հանձնված:

2. Վարույթի հարուցման առիթի և հիմքի հակիրճ նկարագրությունը.

Հանձնաժողովի նախագահի 2022 թվականի մայիսի 30-ի «Դիտանցում իրականացնելու մասին» թիվ 97-Ա հրամանի հիման վրա «Սիթի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ նաև՝ **Ընկերություն**)՝ ք. Երևան, Տիգրան Մեծի 10 հասցեում գործող «Երևան Սիթի» առևտրի օբյեկտում (այսուհետ նաև՝ **Առևտրի օբյեկտ**) իրականացվել են դիտանցումներ:

Դիտանցումների արդյունքում արձանագրվել է, որ Առևտրի օբյեկտում վաճառքում առկա են ՀՀ-ում արտադրված «ORG NIC» (բացատ հատվածում առկա է «A» տառի վրա կանաչու պատկեր և «GREENS» բառը) և «organic.greens» մակնշումներով սպանախ, ռուկոլա, ռոզմարին, միքս, կիտրոնի ռեհան, ուրց, կանաչ ռեհան և անանուխ:

Հանձնաժողովի նախագահի 2022 թվականի մայիսի 30-ի «Արտաքին դիտում իրականացնելու մասին» թիվ 98-Ա հրամանի հիման վրա www.yerevan-city.am կայքէջում իրականացվել է արտաքին դիտում:

Արտաքին դիտման արդյունքների համաձայն՝ www.yerevan-city.am կայքէջի որոնման դաշտում «organic» բառի մուտքագրման արդյունքում պարզվել է, որ վաճառքում առկա են ««ORG NIC» (բացատ հատվածում առկա է «A» տառի վրա կանաչու պատկեր և «GREENS» բառը) մակնշմամբ սպանախ, ռուկոլա, ռոզմարին, միքս, կիտրոնի ռեհան, ուրց, կանաչ ռեհան և անանուխ:

Վարույթը հարուցվել է Լ. Խալաթյանի կողմից «ORG NIC» (բացատ հատվածում առկա է «A» տառի վրա կանաչու պատկեր և «GREENS» բառը) և «organic.greens» մակնշումներով անանուխի, սպանախի, ռուկոլայի, ռոզմարինի, միքսի, կիտրոնի ռեհանի, ուրցի և կանաչ ռեհանի (այսուհետ նաև՝ **Ապրանքներ**) իրացման միջոցով առերևույթ հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցության հատկանիշների առկայության հիմքով:

3. Լ. Խալաթյանի և ԱՁ Ա. Դարբինյանի դիրքորոշումները.

Լ. Խալաթյանը և ԱՁ Ա. Դարբինյանը սույն գործի վերաբերյալ որևէ դիրքորոշում չեն ներկայացրել:

4. Հանձնաժողովի կողմից պահանջված և ստացված փաստաթղթերը և այլ տեղեկատվությունը.

1. Հանձնաժողովի նախագահի 2022 թվականի մայիսի 30-ի «Դիտանցում իրականացնելու մասին» թիվ 97-Ա հրամանի հիման վրա 2022 թվականի մայիսի 31-ին, հունիսի 3-ին և հունիսի 6-ին Ընկերության՝ ք. Երևան, Տիգրան Մեծ 10 հասցեում գործող «Երևան Սիթի» առևտրի օբյեկտում իրականացվել են դիտանցումներ, որոնց արդյունքում կազմվել են «Դիտանցման արդյունքների վերաբերյալ» համապատասխանաբար թիվ 97, թիվ 97/1 և թիվ 97/2 արձանագրությունները (համապատասխանաբար այսուհետ նաև՝ **թիվ 97, թիվ 97/1 և թիվ 97/2 արձանագրություններ**):

Թիվ 97 արձանագրության համաձայն՝ Առևտրի օբյեկտում վաճառքում առկա են «ORG NIC» (բացատ հատվածում առկա է «A» տառի վրա կանաչու պատկեր և «GREENS» բառը) և «organic.greens» մակնշումներով սպանախ, ռուկոլա, ռոզմարին և միքս: Տվյալ ապրանքների տուփերի փաթեթվածքների վրա նշված է հետևյալը. «Արտադրված է Հայաստանում», սակայն արտադրող տնտեսավարող սուբյեկտի վերաբերյալ մակնշում առկա չէ:

Թիվ 97/1 արձանագրության համաձայն՝ Առևտրի օբյեկտում վաճառքում առկա են «ORG NIC» (բացատ հատվածում առկա է «A» տառի վրա կանաչու պատկեր և «GREENS» բառը) և «organic.greens» մակնշումներով կիտրոնի ռեհան, ուրց և կանաչ ռեհան: Տվյալ ապրանքների տուփերի փաթեթվածքների վրա նշված է հետևյալը. «Արտադրված է Հայաստանում», սակայն արտադրող տնտեսավարող սուբյեկտի վերաբերյալ մակնշում առկա չէ:

Թիվ 97/2 արձանագրության համաձայն՝ Առևտրի օբյեկտում վաճառքում առկա է «ORG NIC» (բացատ հատվածում առկա է «A» տառի վրա կանաչու պատկեր և «GREENS» բառը) և «organic.greens» մակնշումով անանուխ, որի տուփի փաթեթվածքի վրա նշված է հետևյալը. «Արտադրված է Հայաստանում», սակայն արտադրող տնտեսավարող սուբյեկտի վերաբերյալ մակնշում առկա չէ:

2. Հանձնաժողովի նախագահի 2022 թվականի մայիսի 30-ի «Արտաքին դիտում իրականացնելու մասին» թիվ 98-Ա հրամանի հիման վրա իրականացվել է Ընկերության «yerevan-city.am» կայքի արտաքին դիտում, որի արդյունքում կազմվել է «Արտաքին դիտման արդյունքների վերաբերյալ» թիվ 98 արձանագրությունը (այսուհետ նաև՝ **թիվ 98 արձանագրություն**):

Թիվ 98 արձանագրության համաձայն՝ www.yerevan-city.am կայքէջի որոնման դաշտում «organic» բառի մուտքագրման արդյունքում պարզվել է, որ վաճառքում առկա են հետևյալ ապրանքները՝ Անանուխ «Mint», Կանաչ Ռեհան «Basil», Ուրց «Thyme», Սպանախ «Spinach», Ռուկոլա «Ruccola», Ռոզմարին «Rosemary», Միքս «Mix», Կիտրոնի Ռեհան «Lemon Basil», որոնց փաթեթվածքների վրա մակնշված է հետևյալը. ««ORG NIC» (բացատ հատվածում առկա է «A» տառի վրա կանաչու պատկեր և «GREENS» բառը), իսկ

փաթեթավորումների ձախ կողմի հատվածում նշված են «@_organic.greens» և «Արտադրված է Հայաստանում» արտահայտությունները:

3. Հանձնաժողովի նախագահը 2022 թվականի հունիսի 8-ին դիմել է Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին (այսուհետ նաև՝ **Տեսչական մարմին**)՝ հայտնելով, որ Ընկերությանը պատկանող ք. Երևան, Տիգրան Մեծ 10 հասցեում գործող «Երևան Սիթի» առևտրի օբյեկտում վաճառվող Ապրանքների տուփերի վրա առկա չեն «Սննդամթերքի անվտանգության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված՝ սննդամթերքի, սննդամթերքի հետ անմիջական շփման մեջ գտնվող նյութերի մակնշման մի շարք պահաջներ և խնդրել է ձեռնարկել համապատասխան միջոցառումներ և արդյունքների մասին տեղեկացնել Հանձնաժո»ղովին:

Տեսչական մարմինը 2022 թվականի հունիսի 15-ին տեղեկացրել է, որ 2022 թվականի հունիսի 10-ի թիվ 1905-Ա հրամանի հիման վրա Ընկերությունում (ք. Երևան, Տիգրան Մեծի 10 հասցեում) իրականացվել է դիտարկում: Դիտարկման արդյունքում հայտնաբերվել են «organic.greens» մակնշումներով անանուխ 1 տուփ, կանաչ ռեհան 3 տուփ, ռուկոլա 6 տուփ, ռոզմարին 2 տուփ, կիտրոնի ռեհան 2 տուփ և մանգոլդ 2 տուփ արտադրատեսակները, որոնց փաթեթվածքների վրա արտադրող ընկերության վերաբերյալ տվյալներն առկա չեն եղել: Պետական վերահսկողության շրջանակներում տրվել է «Արտադրանքի իրացումը կասեցնելու մասին» կարգադրագիր և վերը նշված արտադրատեսակները հանվել են վաճառքից, ինչպես նաև պետական վերահսկողության շրջանակներում պարզվել է, որ վերոնշյալ արտադրատեսակների արտադրությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության, Արարատի մարզ, Ղուկասավան համայնքում բնակվող Լ. Խալաթյանի կողմից:

4. Հանձնաժողովի նախագահի՝ 2022 թվականի հունիսի 8-ի թիվ 002265 գրությամբ Ընկերությունից պահանջվել է Հանձնաժողով ներկայացնել տեղեկատվություն՝ Ապրանքներն Ընկերությանը մատակարարող տնտեսավարող սուբյեկտի տվյալների (անվանում, ՀՎՀՀ և այլն) մասին՝ կցելով Ապրանքների ձեռքբերման վերաբերյալ փաստաթղթերի պատճենները:

Ընկերությունը, ի պատասխան թիվ 002265 գրության, ներկայացրել է 2022 թվականի մարտի 1-ի առք ու վաճառքի պայմանագիր և գնման ակտեր, որտեղ որպես մատակարար անձ նշված է Լ. Խալաթյանի անունը, ինչպես նաև ՀՀ Արարատի մարզի Ղուկասավան համայնքի վարչական ղեկավարի կողմից Լ. Խալաթյանին տրված տեղեկանքն առ այն, որ վերջինս նշված համայնքում ունի 5000 քմ ջերմատուն, որտեղ մշակում է բանջարեղեն:

5. Հանձնաժողովի նախագահի պաշտոնակատարի՝ 2022 թվականի հունիսի 29-ի թիվ 003075 գրությամբ Լ. Խալաթյանից պահանջվել է Հանձնաժողով ներկայացնել տեղեկատվություն՝ իր կողմից 2021 թվականին «ORG NIC» (բացատ հատվածում առկա է «A» տառի վրա կանաչու պատկեր և «GREENS» բառը) և «organic.greens» մակնշումներով սպանախի, ռուկոլայի, ռոզմարինի, միքսի, կիտրոնի ռեհանի, ուրցի, կանաչ ռեհանի և անանուխի իրացումից ստացված եկամտի չափի վերաբերյալ՝ առանձնացված ըստ կոնկրետ ապրանքի:

Լ. Խալաթյանը Հանձնաժողովի նախագահի պաշտոնակատարի 2022 թվականի հունիսի 29-ի թիվ 003075 գրությամբ պահանջված տեղեկատվությունը Հանձնաժողով չի ներկայացրել:

6. Հանձնաժողովը՝ Հանձնաժողովի նախագահի պաշտոնակատարի 2022 թվականի հունիսի 29-ի թիվ ԳԳ-1036 գրությամբ, դիմել է ՊԵԿ՝ խնդրելով տրամադրել տեղեկատվություն՝ Լ. Խալաթյանի կողմից «ORG NIC» (բացատ հատվածում առկա է «A» տառի վրա կանաչու պատկեր և «GREENS» բառը) և «organic.greens» մակնշումով Ապրանքների իրացումից, իսկ անհնարինության դեպքում գյուղատնտեսական արտադրանքի իրացումից ստացված եկամտի չափի վերաբերյալ:

ՊԵԿ-ը 2022 թվականի հուլիսի 8-ին տեղեկացրել է, որ ՀՀ ՊԵԿ հարկային մարմնի տեղեկատվական շտեմարանում 2022 թվականի հունիսի 7-ի դրությամբ առկա տվյալների համաձայն գրությամբ նշված Լ. Խալաթյանը որպես հարկ վճարող հաշվառված չէ, ինչպես նաև Լ. Խալաթյանի իրացումների վերաբերյալ տեղեկատվություն հնարավոր չէ տրամադրել:

7. Հանձնաժողովի նախագահի պաշտոնակատարի՝ 2022 թվականի օգոստոսի 2-ի թիվ 004069 գրությամբ Ընկերությունից պահանջվել է Հանձնաժողով ներկայացնել հետևյալ տեղեկատվությունը.

1) Լ. Խալաթյանի կողմից Ընկերությանը ««ORG NIC» (բացատ հատվածում առկա է «A» տառի վրա կանաչու պատկեր և «GREENS» բառը) և «organic.greens» մակնշումներով Ապրանքների մատակարարման սկզբնաժամկետների վերաբերյալ՝ նշելով ամսաթվերը,

2) Լ. Խալաթյանի կողմից առաջին մատակարարման օրվանից մինչև 2022 թվականի հունիսի 27-ն ընկած ժամանակահատվածում Ընկերությանը մատակարարված Ապրանքների ծավալների վերաբերյալ՝ բնեղեն և արժեքային արտահայտությամբ՝ առանձնացված ըստ ամիսների և տեսակների, ինչպես նաև կցելով դրանց մատակարարման փաստը հավաստող բոլոր փաստաթղթերի պատճենները:

Ընկերությունը, ի պատասխան թիվ 004069 գրության, 2022 թվականի օգոստոսի 8-ին, 23-ին և 24-ին տրամադրել է պահանջված տեղեկատվությունը, մասնավորապես՝ Ընկերությունը ներկայացրել է գնման ակտեր, որտեղ որպես մատակարար անձ նշված է

:

8. Հանձնաժողովի անբարեխիղճ մրցակցության վերահսկողության վարչության (այսուհետ նաև՝ **Վարչություն**) կողմից Հանձնաժողովի նախագահին ժամանակավոր փոխարինողին 2022 թվականի օգոստոսի 12-ին ներկայացված թիվ 004484 զեկուցագրի համաձայն՝

:

Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի

գործակալության պաշտոնական էլեկտրոնային համակարգում առկա տեղեկության համաձայն՝

:

9. Հանձնաժողովի նախագահին ժամանակավոր փոխարինողի 2022 թվականի օգոստոսի 8-ի թիվ 1167 գրությամբ ՊԵԿ-ին խնդրել է Հանձնաժողովին տրամադրել տեղեկատվություն ԱՁ Ա.Դարբինյանի 2021 թվականի տարեկան հասույթի չափի, ինչպես նաև 2021 թվականին և 2022 թվականի հունվարի 1-ից մինչև մայիսի 31-ն ընկած ժամանակահատվածում «ORG NIC» (բացատ հատվածում առկա է «A» տառի վրա կանաչու պատկեր և «GREENS» բառը) մակնշմամբ Ապրանքների իրացման ծավալների, իսկ անհնարինության դեպքում դուրս գրված բոլոր հաշվարկային փաստաթղթերի և ՀԴՄ կտրոնների միջոցով իրականացված գործարքների մասին:

ՊԵԿ-ը 2022 թվականի օգոստոսի 10-ին Հանձնաժողով է ներկայացրել պահանջված տեղեկատվությունը, որի համաձայն ԱՁ Ա. Դարբինյանը 2021 թվականին իրացրել է ռուկոլա, տիմյան (ուրց), բազիլիկ (ռեհան), միքս, ռոզմարին, ռեհան, ռուկոլա և սպանախ, որոնց իրացումից ստացել է ընդհանուր առմամբ ՀՀ դրամի չափով հասույթ:

10. «Էկոգլոբ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության պաշտոնական կայքում (hy.ecoglobe.com) առկա տեղեկատվության համաձայն՝ 2022 թվականի մայիսի 20-ի դրությամբ Լ. Խալաթյանը և ԱՁ Ա. Դարբինյանը ներառված չեն սերտիֆիկացված մատակարարողների ցանկում:

<u>5. Գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկման արդյունքում Հանձնաժողովը հաստատված է համարում հետևյալ փաստական հանգամանքները.</u>

1. Լ. Խալաթյանի և ԱՁ Ա. Դարբինյանի կողմից արտադրվում և իրացվում են «ORG NIC» (բացատ հատվածում առկա է «A» տառի վրա կանաչու պատկեր և «GREENS» բառը) և «organic.greens» մակնշումներով Ապրանքները:

2. Լ. Խալաթյանը և ԱՁ Ա. Դարբինյանը չունեն Ապրանքների օրգանական գյուղատնտեսության արտադրանքի համապատասխանության հավաստագրեր (սերտիֆիկատներ):

3.

:

4. ՀՀ ՊԵԿ տվյալների համաձայն՝ 2022 թվականի հունիսի 7-ի դրությամբ Լ. Խալաթյանը որպես հարկ վճարող հաշվառված չէ, ինչպես նաև Լ. Խալաթյանի իրացումների վերաբերյալ տեղեկատվություն առկա չէ:

5. ՀՀ ՊԵԿ տվյալների համաձայն՝ ԱՁ Ա. Դարբինյանը 2021 թվականին ռուկոլայի, տիմյանի (ուրց), բազիլիկի (ռեհան), միքսի, ռոզմարինի, ռեհանի, ռուկոլայի և սպանախի իրացումից ստացել է ընդհանուր առմամբ ՀՀ դրամի չափով հասույթ:

<u>6. Վարույթի փաստական հանգամանքների և վերաբերելի իրավական նորմերի ուսումնասիրության և վերլուծության արդյունքում Հանձնաժողովը եզրահանգում է հետևյալին.</u>

1) <u>Լ. Խալաթյանին և ԱՁ Ա. Դարբինյանին անձանց խումբ համարվելու հարցի կապակցությամբ.</u>

Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ սույն օրենքի իմաստով՝ անձանց խումբն իրավաբանական և (կամ) ֆիզիկական այնպիսի անձանց խումբ է, որոնց միջև փաստացի առկա է փոխկապվածություն կամ վերահսկողություն, և որոնց նկատմամբ բավարարվում է հետևյալ պայմաններից առնվազն մեկը. կազմակերպությունները և ֆիզիկական կամ իրավաբանական անձինք, եթե նրանք փոխկապվածության կամ վերահսկողության ուժով գործում են ընդհանուր տնտեսական շահով պայմանավորված:

Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի համաձայն՝ սույն օրենքի իմաստով՝ անձանց խումբն իրավաբանական և (կամ) ֆիզիկական այնպիսի անձանց խումբ է, որոնց միջև փաստացի առկա է փոխկապվածություն կամ վերահսկողություն, և որոնց նկատմամբ բավարարվում է հետևյալ պայմաններից առնվազն մեկը. ֆիզիկական անձը, նրա ամուսինը, ծնողը, զավակը, որդեգրողը, որդեգրվածը, եղբայրը կամ քույրը:

Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի համաձայն՝ սույն օրենքի իմաստով՝ անձանց խումբն իրավաբանական և (կամ) ֆիզիկական այնպիսի անձանց խումբ է, որոնց միջև փաստացի առկա է փոխկապվածություն կամ վերահսկողություն, և որոնց նկատմամբ բավարարվում է հետևյալ պայմաններից առնվազն մեկը. ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձինք, որոնցից յուրաքանչյուրը սույն մասում նշված հիմքերից որևէ մեկով անձանց խումբ է կազմում միևնույն անձի հետ, և այլ անձինք, որոնք սույն մասում նշված հիմքերից որևէ մեկով տվյալ անձանցից որևէ մեկի հետ անձանց խումբ են կազմում:

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետի համաձայն՝ տնտեսավարող սուբյեկտ է անհատ ձեռնարկատերը, իրավաբանական անձը, այլ կազմակերպություն, դրա ներկայացուցչություն կամ մասնաճյուղ, անձանց խումբ կամ անձանց միություն, իսկ սույն օրենքով նախատեսված՝ համակենտրոնացման, անբարեխիղճ մրցակցության և տնտեսական գործունեության համակարգման դեպքերում տնտեսավարող սուբյեկտ է համարվում նաև ֆիզիկական անձը:

:

Միաժամանակ, Աղասի Գագիկի Դարբինյանը և Լ. Խալաթյանը զբաղվում են Ապրանքների արտադրությամբ և իրացմամբ, ընդ որում Աղասի Գագիկի Դարբինյանը գործունեություն է իրականացնում որպես անհատ ձեռնարկատեր:

Նշված փաստերը վկայում են, որ ԱՁ Ա. Դարբինյանի և Լ. Խալաթյանի միջև առկա է փոխկապվածություն, և վերջիններս գործում են ընդհանուր տնտեսական շահով՝ (Ապրանքների իրացումից ստանալ եկամուտ) պայմանավորված:

Վերոգրյալի հաշվառմամբ Հանձնաժողովն արձանագրում է, որ Լ. Խալաթյանը և ԱՁ Ա. Դարբինյանը հանդիսանում են անձանց խումբ և հանդես են գալիս որպես մեկ տնտեսավարող սուբյեկտ:

2) <u>«Ֆիզիկական անձ Լարիսա Լյովայի Խալաթյան և անհատ ձեռնարկատեր Աղասի Գագիկի Դարբինյան» անձանց խմբի կողմից իրավախախտում կատարված լինելու հարցի կապակցությամբ.</u>

Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցություն է համարվում տնտեսավարող սուբյեկտի ցանկացած գործողություն կամ վարքագիծ, որը հակասում է սույն օրենքին, այլ օրենքներին, նորմատիվ իրավական ակտերին կամ գործարար շրջանառության սովորույթներին, խախտում է տնտեսավարող սուբյեկտների միջև կամ վերջիններիս ու սպառողների կամ ձեռք բերողների միջև բարեխղճության՝ ազնվության, արդարության, ճշմարտության և (կամ) անաչառության սկզբունքները:

Օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցությունն արգելվում է: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցություն են սույն օրենքի 17-24-րդ հոդվածներում նախատեսված դեպքերը, ինչպես նաև սույն հոդվածի 1-ին մասի հատկանիշներին համապատասխանող այլ գործողությունները:

Վերոնշյալ իրավանորմերի համակարգային վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը սահմանել է գործողությունը անբարեխիղճ դիտարկելու երկու եղանակ. մի դեպքում անբարեխիղճ մրցակցության դեպքերն են Օրենքի 16-24-րդ հոդվածներով սահմանված առանձին դրսևորումները, մյուս դեպքում՝ Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշները պարունակող գործողությունները, այն է՝ տնտեսավարող սուբյեկտի ցանկացած գործողություն կամ վարքագիծ, որը.

1. հակասում է Օրենքին, այլ օրենքներին, նորմատիվ իրավական ակտերին կամ գործարար շրջանառության սովորույթներին,

2. խախտում է մրցակիցների միջև կամ վերջիններիս և սպառողների միջև բարեխղճության՝ ազնվության, արդարության, ճշմարտության և (կամ) անաչառության սկզբունքները:

Տվյալ դեպքում տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթը հարուցվել է անբարեխիղճ մրցակցության դրսևորման՝ հասարակության մոլորեցման վերաբերյալ, ուստի քննարկման ենթակա է «Ֆիզիկական անձ Լարիսա Լյովայի Խալաթյան և անհատ ձեռնարկատեր Աղասի Գագիկի Դարբինյան» անձանց խմբի կողմից հասարակության մոլորեցման հարցը:

Օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցություն է համարվում հասարակության մոլորեցումը, այդ թվում՝

1) ցանկացած գործողություն կամ վարքագիծ, որը մոլորեցնում է կամ կարող է մոլորեցնել հասարակությանը տնտեսավարող սուբյեկտի, նրա գործունեության կամ առաջարկած ապրանքների, դրանց գովազդմանը, տարածմանը կամ իրացմանը նպաստող միջոցառումների, ապրանքի աշխարհագրական ծագման կամ Օրենքի 20-րդ հոդվածում թվարկված բնութագրերի կամ պայմանների վերաբերյալ.

2) ապրանքների որակն անհիմն չափազանցնելը կամ որակի, քանակի կամ այլ բնութագրերի կամ ապրանքների ձեռքբերման կամ իրացման վերաբերյալ

համապատասխան տեղեկատվություն չհիշատակելը կամ տեղեկատվությունն այն ձևով ներկայացնելը, որը կարող է հանգեցնել թյուր տպավորության ստեղծման (ապակողմնորոշման).

3) գովազդի մեջ (գովազդելու ընթացքում) կամ իրացման ընթացքում թերի կամ կեղծ կամ ոչ լիարժեք տվյալների (տեղեկությունների) նշումը կամ այնպիսի տվյալների (տեղեկությունների) բացակայությունը կամ տվյալների (տեղեկությունների) այն ձևով նշումը, որն սպառողին հնարավորություն չի տալիս ամբողջական պատկերացում կազմելու իրացվող կամ գովազդվող ապրանքի կամ տնտեսավարող սուբյեկտի վերաբերյալ.

4) օրենքին հակասող, այդ թվում՝ անբարեխիղճ կամ հակաօրինական կամ հավաստիության կամ պատշաճության խախտմամբ իրականացվող գովազդները, որոնք կարող են կանխել, սահմանափակել կամ արգելել տնտեսական մրցակցությունը կամ վնասել սպառողների շահերը:

Վերոնշյալ նորմերի համադրված վերլուծությունից բխում է, որ Օրենքի 16-րդ և 21-րդ հոդվածները, բարեխիղճ մրցակցությունն երաշխավորելուց բացի կոչված են երաշխավորելու սպառողների իրավունքները, այդ թվում՝ սպառողի՝ ապրանքների մասին ճշգրիտ տեղեկատվություն ստանալու իրավունքը: Մասնավորապես՝ տնտեսավարող սուբյեկտի կողմից իրացվող կամ գովազդվող ապրանքի վերաբերյալ տվյալների կամ տեղեկությունների թերի, կեղծ կամ ոչ լիարժեք լինելու կամ դրանում իրացվող կամ գովազդվող ապրանքի մասին ամբողջական պատկերացում կազմելու համար անհրաժեշտ որևէ տվյալի կամ տեղեկության բացակայության յուրաքանչյուր դեպքում Օրենքով տնտեսավարող սուբյեկտի կողմից կատարված գործողությունը կամ դրսևորած վարքագիծը դիտարկվում է որպես հասարակության մոլորեցմամբ անբարեխիղճ մրցակցություն:

«Օրգանական գյուղատնտեսության մասին» օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ օրգանական գյուղատնտեսական արտադրանքի համապատասխանության հավաստումն իրականացնում է սերտիֆիկացման մարմինը «օրգանական» կամ «անցումային շրջանի օրգանական» սերտիֆիկատ տալու միջոցով: Սերտիֆիկատի տրման կարգը սահմանում է ՀՀ կառավարությունը:

«Օրգանական գյուղատնտեսության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ օրգանական գյուղատնտեսական արտադրանքի մակնշման մեջ, ինչպես նաև գովազդում նշվում է «օրգանական» կամ մակնշման առումով համարժեք «էկոլոգիական», «էկոլոգիապես մաքուր», «բիոլոգիական» տերմինները կամ դրանց «էկո», «բիո» կամ կրճատ այլ ձևերը՝ առանձին կամ հարադիր, միայն այն դեպքում, եթե՝

1) այն օրգանական գյուղատնտեսության վարման մեթոդով արտադրված և հավաստված (սերտիֆիկացված) արտադրանք է,

2) ներմուծվող արտադրանքն ուղեկցվում է օրգանական գյուղատնտեսության կանոններով սահմանված համապատասխանության հավաստման փաստաթղթերով:

«Օրգանական գյուղատնտեսության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1.1 մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում սննդամթերքի արտադրություն և (կամ) շրջանառություն իրականացնող և (կամ) ծառայություններ մատուցող տնտեսավարող սուբյեկտների, թողարկվող և (կամ) շրջանառվող սննդամթերքի և (կամ) սննդամթերքի

մատուցման ծառայությունների անհատականացման միջոցներում արգելվում է օգտագործել «օրգանական», «էկոլոգիական», «բիոլոգիական» բառերը կամ դրանց «էկո», «բիո» կամ կրճատ այլ ձևերը՝ առանձին կամ հարադիր, բացառությամբ զուտ օրգանական գյուղատնտեսական արտադրանք արտադրող և (կամ) շրջանառող և (կամ) ծառայություններ մատուցող տնտեսավարող սուբյեկտների, թողարկվող և (կամ) շրջանառվող օրգանական գյուղատնտեսական արտադրանքի և (կամ) օրգանական գյուղատնտեսական արտադրանքի ծառայությունների մատուցման անհատականացման միջոցների:

«Օրգանական գյուղատնտեսության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ՀՀ տարածքում շրջանառության մեջ գտնվող օրգանական գյուղատնտեսական արտադրանքը պետք է մակնշված լինի համապատասխան նշանով և ուղեկցվի սերտիֆիկատով: Օրգանական գյուղատնտեսական արտադրանքի, ինչպես նաև օրգանական գյուղատնտեսության անցումային շրջանում գտնվող արտադրանքի մակնշման և պիտակավորման կարգը, ինչպես նաև օրգանական գյուղատնտեսության արտադրանքի համապատասխանության նշանի, համապատասխանության սերտիֆիկատի ձևերը հաստատում է ՀՀ կառավարությունը:

Վերը նշված նորմերի համակարգային վերլուծությունից պարզ է դառնում, որ գյուղատնտեսական արտադրանքի մակնշման մեջ, ինչպես նաև գովազդում «օրգանական» կամ մակնշման առումով համարժեք «էկոլոգիական», «էկոլոգիապես մաքուր», «բիոլոգիական» տերմինների կամ դրանց «էկո», «բիո» կամ կրճատ այլ ձևերի՝ առանձին կամ հարադիր կառուցվածքները կարելի է օգտագործել միայն օրգանական գյուղատնտեսական արտադրանքի համապատասխանության հավաստագրի (սերտիֆիկատի) առկայության դեպքում:

Այսինքն, օրգանական գյուղատնտեսական արտադրանքի համապատասխանության հավաստագրի (սերտիֆիկատի) բացակայության դեպքում արտադրանքը մակնշելիս կամ գովազդելիս «օրգանական» բառի կամ մակնշման առումով համարժեք այլ տերմինների օգտագործումն անկախ օգտագործման նպատակներից և հարադիր կառուցվածքներից ընկալվում է ապրանքի էկոլոգիապես մաքուր լինելու հավաստում, ինչը հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցություն է:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Ֆիզիկական անձ Լարիսա Լյովայի Խալաթյան և անհատ ձեռնարկատեր Աղասի Գագիկի Դարբինյան» անձանց խմբի կողմից արտադրվում և իրացվում են «ORG NIC» (բացատ հատվածում առկա է «A» տառի վրա կանաչու պատկեր և «GREENS» բառը) և «organic.greens» մակնշումներով Ապրանքները: Փաստորեն, «Ֆիզիկական անձ Լարիսա Լյովայի Խալաթյան և անհատ ձեռնարկատեր Աղասի Գագիկի Դարբինյան» անձանց խումբը Ապրանքների մակնշման մեջ օգտագործում են «organic» բառը և «ORG NIC» (բացատ հատվածում առկա է «A» տառի վրա կանաչու պատկեր և «GREENS» բառը) բառը, որը սպառողների կողմից ընկալվում է որպես «ORGANIC», իսկ «ORGANIC» (organic) բառը մակնշման առումով «օրգանական» բառին համարժեք տերմին է:

Ապրանքները օրգանական գյուղատնտեսական արտադրանքի համապատասխանության հավաստագիր (սերտիֆիկատ) չունեն: Այսինքն՝ Ապրանքները օրգանական գյուղատնտեսության վարման կանոններով արտադրված չեն:

Նման պայմաններում Ապրանքներն իրացնելը սպառողների մոտ կարող է թյուր տպավորություն ստեղծել (ապակողմնորոշել), որ դրանք օրգանական գյուղատնտեսության վարման կանոններին համապատասխան սերտիֆիկացված ապրանքներ են և համարվում են օրգանական գյուղատնտեսական արտադրանք**:**

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ «Ֆիզիկական անձ Լարիսա Լյովայի Խալաթյան և անհատ ձեռնարկատեր Աղասի Գագիկի Դարբինյան» անձանց խմբի կողմից Ապրանքների տուփերի վրա «ORG NIC» (բացատ հատվածում առկա է «A» տառի վրա կանաչու պատկեր և «GREENS» բառը) և «organic» բառերը մակնշելը և իրացնելն այն դեպքում, երբ Ապրանքներն չեն հանդիսանում հավաստված օրգանական գյուղատնտեսական արտադրանք, պարունակում է հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցության հատկանիշներ**,** որի կապակցությամբ օրենսդրությամբ նախատեսված է իրավական հետևանք՝ պատասխանատվության միջոցի կիրառում:

<u>2) «Ֆիզիկական անձ Լարիսա Լյովայի Խալաթյան և անհատ ձեռնարկատեր Աղասի Գագիկի Դարբինյան» անձանց խմբի նկատմամբ պատասխանատվության միջոց կիրառելու հարցի կապակցությամբ.</u>

Օրենքի 92-րդ հոդվածի համաձայն՝ տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման համար Հանձնաժողովն իրավասու է տնտեսավարող սուբյեկտներին, պետական մարմիններին և դրանց պաշտոնատար անձանց տալու նախազգուշացում կամ նշանակելու տուգանք:

Օրենքի 93-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցության համար նշանակվող տուգանքի չափը կազմում է տնտեսավարող սուբյեկտի՝ տվյալ իրավախախտմանը նախորդող տարվա հասույթի մինչև հինգ տոկոսը:

Օրենքի 93-րդ հոդվածի 14-րդ մասի համաձայն՝ անձանց խմբի կողմից օրենքի խախտման համար սույն հոդվածով նախատեսված տուգանքը նշանակվում է այն տնտեսավարող սուբյեկտների նկատմամբ, որոնք իրենց գործողությամբ կամ վարքագծով մասնակցություն են ունեցել իրավախախտմանը կամ իրավախախտման հետևանքով ստացել են կամ կարող էին ստանալ շահույթ կամ առավելություն կամ հայտնվել են առավել բարենպաստ պայմաններում, և տուգանքը հաշվարկվում է այդ տնտեսավարող սուբյեկտների հասույթների ընդհանուր գումարից:

Օրենքի 94-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պատասխանատվության միջոց կիրառելիս Հանձնաժողովը հաշվի է առնում տվյալ իրավախախտման բնույթը, տևողությունը, իրավախախտման հնարավոր կամ փաստացի ազդեցությունը շուկայում մրցակցային իրավիճակի կամ սպառողների շահերի վրա, տնտեսավարող սուբյեկտի կողմից տվյալ խախտման կրկնակիությունը, եթե նախորդ խախտման համար պատասխանատվության միջոց կիրառելու օրվանից չի անցել հինգ տարի, տնտեսավարող սուբյեկտի դիտավորության աստիճանը, տնտեսավարող սուբյեկտի կողմից իրավախախտում կատարվելու շարժառիթները և հանգամանքները, տնտեսավարող

սուբյեկտի կողմից իրավախախտում կատարվելու փաստն ընդունելու կամ Հանձնաժողովի հետ համագործակցելու հանգամանքը, պատասխանատվությունից ազատելու հիմքերը, տնտեսավարող սուբյեկտի վրա նշանակվող տուգանքի հնարավոր ազդեցությունը, տվյալ տնտեսավարող սուբյեկտի գործունեության ոլորտը և տնտեսավարող սուբյեկտի պատմությունը:

Հանձնաժողովի՝ 2021 թվականի դեկտեմբերի 28-ի «Պատասխանատվության միջոցի ընտրության և տուգանքի հաշվարկման մեթոդաբանությունը սահմանելու մասին» թիվ 395-Ն որոշմամբ (այսուհետ նաև՝ **թիվ 395-Ն որոշում**) սահմանված պատասխանատվության միջոցի ընտրության և տուգանքի հաշվարկման մեթոդաբանությունը (այսուհետ նաև՝ **Մեթոդաբանություն**) կարգավորում է Հանձնաժողովի կողմից Օրենքով սահմանված տնտեսական մրցակցության բնագավառում պատասխանատվության միջոցների ընտրության և տուգանքի հաշվարկման հետ կապված հարաբերությունները:

Մեթոդաբանության 6-րդ կետի համաձայն՝ պատասխանատվության միջոցի ընտրությունը և տուգանքի հաշվարկումը յուրաքանչյուր դեպքում իրականացվում է վարույթի ընթացքում հաստատված փաստական հանգամանքների քննարկման արդյունքում Հանձնաժողովի հայեցողությամբ՝ հաշվի առնելով Մեթոդաբանությամբ ամրագրված դրույթները և վարույթի առանձնահատկությունները:

Մեթոդաբանության 8-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովը տալիս է նախազգուշացում հետևյալ դեպքերում. իրավախախտման համար նշանակվող տուգանքի չափը հաշվարկման արդյունքում հավասար է կամ չի գերազանցում 250 000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը:

Մեթոդաբանության 12-րդ կետի համաձայն՝ տուգանքը հաշվարկվում է հետևյալ փուլերով.

1) որոշվում է տուգանքի բազային գումարը.

2) գնահատվում են վարույթի ընթացքում հաստատված ծանրացնող և մեղմացնող հանգամանքները, և հիմքերի առկայության դեպքում բազային գումարը ենթարկվում է համապատասխան փոփոխությունների.

3) Մեթոդաբանությամբ նախատեսված դեպքերում համապատասխանեցվում է պատասխանատվության միջոցը:

Մեթոդաբանության 13-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը տուգանքը հաշվարկում է S = Բ + Բ x (Ծ - Մ) բանաձևով, որտեղ՝ S-ն տուգանքի չափն է, Բ-ն տուգանքի բազային գումարն է, Ծ-ն բոլոր ծանրացնող հանգամանքների համար սահմանված տոկոսների հանրագումարն է, Մ-ն բոլոր մեղմացնող հանգամանքների համար սահմանված տոկոսների հանրագումարն է:

<u>Բազային գումարի հաշվարկը.</u>

Մեթոդաբանության 7-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ անբարեխիղճ մրցակցությունը ըստ բնույթի մրցակցային իրավախախտում է:

Մեթոդաբանության 14-րդ կետի համաձայն՝ մրցակցային իրավախախտումների դեպքում տուգանքի բազային գումարը որոշվում է ապրանքի իրացումից ստացված հասույթի գումարի, իրավախախտման համապատասխան ծանրության խմբի համար

սահմանված տոկոսի և իրավախախտման տևողության արտադրյալի հաշվարկման միջոցով՝ Բ = Հ x Խ x Ժ բանաձևով, որտեղ՝ Բ-ն տուգանքի բազային գումարն է մրցակցային իրավախախտումների դեպքում, Հ-ն ապրանքի իրացումից ստացված հասույթի գումարն է, Խ-ն իրավախախտման համապատասխան ծանրության խումբն է, Ժ-ն իրավախախտման տևողությունն է:

Ապրանքի իրացումից սրացված հասույթ.

Մեթոդաբանության 2-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ ապրանքների իրացումից ստացված հասույթ է համարվում իրավախախտման առարկա հանդիսացող կամ իրավախախտման մեջ ներգրավված ապրանքների և դրանց փոխադարձ փոխարինելի ապրանքների իրացումից ստացված հասույթը:

Մեթոդաբանության 16-րդ կետի համաձայն՝ Ապրանքի իրացումից ստացված հասույթի կամ ընդհանուր հասույթի գումարի հաշվարկումն իրականացնելիս հիմք է ընդունվում իրավախախտման դադարեցման պահին նախորդող տարվա վաճառքի հասույթը կամ ընդհանուր հասույթը:

Մեթոդաբանության 18-րդ կետի համաձայն՝ իրավախախտման նախորդ տարում 12 ամսից պակաս գործունեություն իրականացրած լինելու դեպքում իրացումից ստացված հասույթի կամ ընդհանուր հասույթի չափի հաշվարկումն իրականացվում է իրավախախտման դադարեցման պահին նախորդող, բայց ոչ ավելի քան 12 ամսվա գործունեության ժամանակահատվածի ապրանքի իրացումից ստացված հասույթի կամ ընդհանուր հասույթի չափից:

Տվյալ պարագայում իրավախախտման դադարեցման պահը 2022 թվականի հունիս ամիսն է, հետևաբար, որպես ապրանքի իրացումից հասույթ, հիմք է ընդունվում «Ֆիզիկական անձ Լարիսա Լյովայի Խալաթյան և անհատ ձեռնարկատեր Աղասի Գագիկի Դարբինյան» անձանց խմբի՝ իրավախախտման դադարեցման պահին նախորդող տարվա՝ 2021 թվականի Ապրանքների իրացումից ստացված հասույթի չափը:

Իրավախախտման ծանրության խումբը.

Հիմք ընդունելով Մեթոդաբանության 20-րդ կետի 3-րդ ենթակետը՝ սույն գործով ծանրության խումբը պետք է հաշվարկել 2.5 տոկոս դրույքաչափով:

Իրավախախտման տևողությունը.

Իրավախախտման տևողությունը հաշվարկելիս հիմք են ընդունվում Մեթոդաբանության 22-րդ, 23-րդ և 24-րդ կետերը: Սույն գործով «Ֆիզիկական անձ Լարիսա Լյովայի Խալաթյան և անհատ ձեռնարկատեր Աղասի Գագիկի Դարբինյան» անձանց խմբի կողմից Ապրանքների իրացման սկզբնաժամկետն է , իսկ իրավախախտման վերաբերյալ վարույթը հարուցվել է 2022 թվականի հունիսի 28-ին: Հետևաբար, «Ֆիզիկական անձ Լարիսա Լյովայի Խալաթյան և անհատ ձեռնարկատեր Աղասի Գագիկի Դարբինյան» անձանց խմբի կողմից իրավախախտման կատարման ժամանակահատվածը իսկ իրավախախտման տևողության գործակիցը է:

Վերոնշյալից բխում է, որ տուգանքի բազային գումարը կազմում է 630 338 ՀՀ դրամ ՀՀ դրամ՝ ըստ հետևյալ հաշվարկի.

:

Պատասխանատվությունը ծանրացնող և մեղմացնող հանգամանքներ.

Մեթոդաբանության 31-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը դիտարկում է ծանրացնող և մեղմացնող հանգամանքները և վարչական ակտում արտացոլում միայն այն հանգամանքները, որոնք հաստատվել են համապատասխան վարույթի ընթացքում:

Մեթոդաբանության 32-րդ կետի համաձայն՝ մեղմացնող հանգամանքի առկայության ապացուցման բեռը կրում է վարույթով պատասխանողը:

Մեթոդաբանության 27-32-րդ կետերով սահմանված են պատասխանատվությունը ծանրացնող և մեղմացնող հանգամանքները, ինչպես նաև սահմանված են բազային գումարից ծանրացնող և մեղմացնող հանգամանքների հաշվարկման դրույքաչափերը:

Սույն գործով Հանձնաժողովի կողմից որպես ծանրացնող և որպես մեղմացնող որևէ հանգամանք չի հայտնաբերվել և չի հաստատվել:

Այսպիսով, ծանրացնող և մեղմացնող հանգամանքների համար սահմանված դրույքաչափը կազմում է :

<u>Տուգանքի հաշվարկը.</u>

Վերոշարադրյալից հետևում է, որ տուգանքի չափը կազմում է ՀՀ դրամ՝ համաձայն հետևյալ հաշվարկի.

:

<u>3) «Ֆիզիկական անձ Լարիսա Լյովայի Խալաթյան և անհատ ձեռնարկատեր Աղասի Գագիկի Դարբինյան» անձանց խմբին հանձնարարություն տալու հարցի կապակցությամբ.</u>

Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը (...) սույն օրենքը խախտելու համար տնտեսավարող սուբյեկտներին, պետական մարմիններին և նրանց պաշտոնատար անձանց ենթարկում է պատասխանատվության՝ հանձնարարելով իր սահմանած ժամկետում շտկել խախտումը և հետագայում բացառել այն:

Տվյալ պարագայում Հանձնաժողովի կողմից արձանագրվել է, որ «Ֆիզիկական անձ Լարիսա Լյովայի Խալաթյան և անհատ ձեռնարկատեր Աղասի Գագիկի Դարբինյան» անձանց խումբն առանց օրգանական գյուղատնտեսական արտադրանքի համապատասխանության հավաստագրերի (սերտիֆիկատների) «ORG NIC» (բացատ հատվածում առկա է «A» տառի վրա կանաչու պատկեր և «GREENS» բառը) և «organic.greens» բառերի մակնշմամբ Ապրանքների իրացման միջոցով դրսևորել է հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցություն:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Տեսչական մարմնի իրականացված վերահսկողության շրջանակներում վերը նշված ապրանքները հանվել են վաճառքից՝ Հանձնաժողովի կողմից հանձնարարություն տալու անհրաժեշտությունը բացակայում է:

<u>7. Եզրափակիչ մաս.</u>

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 67-րդ հոդվածի 2-րդ մասով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 70-րդ և 71-րդ հոդվածներով՝ Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Ֆիզիկական անձ Լարիսա Լյովայի Խալաթյան և անհատ ձեռնարկատեր Աղասի Գագիկի Դարբինյան» անձանց խմբի կողմից «ORG NIC» (բացատ հատվածում առկա է «A» տառի վրա կանաչու պատկեր և «GREENS» բառը) և «organic.greens» բառերի մակնշմամբ անանուխի, սպանախի, ռուկոլայի, ռոզմարինի, միքսի, կիտրոնի ռեհանի, ուրցի և կանաչ ռեհանի իրացումն այն դեպքում, երբ դրանք չեն հանդիսանում հավաստված օրգանական գյուղատնտեսական արտադրանք, որակել որպես հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցություն (այսուհետ՝ **Օրենքի խախտում**):

2. Օրենքի խախտման համար որպես անձանց խումբ ֆիզիկական անձ Լարիսա Լյովայի Խալաթյանի և անհատ ձեռնարկատեր Աղասի Գագիկի Դարբինյանի նկատմամբ նշանակել 630 338 (վեց հարյուր երեսուն հազար երեք հարյուր երեսունութ) ՀՀ դրամի չափով տուգանք:

3. Սույն որոշումը համապատասխանաբար ուժի մեջ է մտնում դրա պատճենը ֆիզիկական անձ Լարիսա Լյովայի Խալաթյանին և անհատ ձեռնարկատեր Աղասի Գագիկի Դարբինյանին հանձնելու հաջորդող օրվանից:

4. Սույն որոշման 2-րդ կետը դրանով նշանակված տուգանքը մինչև սույն որոշման անբողոքարկելի դառնալը չվճարելու դեպքում ենթակա է հարկադիր կատարման՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով սահմանված կարգով:

5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

6. Սույն որոշման բողոքարկումը չի կասեցնում դրա գործողությունը կամ կատարումը:

ՆԱԽԱԳԱՀ **Գ. ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2022 թ. սեպտեմբերի 20
Երևան